

ԱՐՏԱԿ ՀԱՄԱՐԶՈՒԽՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ՝ «...ՈՒ ԱՐՏԱՍԿԵԼ ՄԱՋԵՐԻԴ ՄԵՋ...»

Ծ. Ժ. ԱՍԱՏՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

Բանաստեղծ Արտակ Համբարձումյանն այն եզակիներից էր, ովքեր իրենց պոետական աշխարհը բնականորեն խարսխում են հայ դասական պոեզիայի ավանդների և 20-րդ դարի նորարարությունների վրա՝ ի սկզբանե դրսևորելով գեղարվեստական ընկալման ու ներկայացման այնպիսի մի որակ, որի ամենաճիշտ գնահատականը, ինչպես ընդունված է ասել, ժամանակը կարող է տալ միայն: Բանաստեղծ Համո Սահյանը, անդրադառնալով ժամանակի քնահաճույթին թողնված գրական հարցերին, գրել է. «Գուցե ասեն, թե ժամանակը կորոշի: Գուցե... Բայց չէ՞ որ մենք ենք մեր ժամանակի տերերն ու ոգին, էլ ինչո՞ւ մեր գործը թողնենք անտարբեր ժամանակի խորհրդին»:

Բանաստեղծ Արտակ Համբարձումյանը չնատնվեց «անտարբեր ժամանակի» քնահաճույթին. գրական առաջին իսկ քայլերից հետո նրա անունն անցկատ չմնաց գրական ասպարեզում: Տակավին 1992 թ. բանաստեղծ Վահագն Դավթյանը, անդրադառնալով ժամանակի պարբերականներում լույս տեսած Ա. Համբարձումյանի բանաստեղծություններին, գրում է, որ նրա բանաստեղծությունները կարդալիս լցվել է «խորին մի գոհունակությամբ, որ այս դառն ու դժնդակ ժամանակներում գրականություն է մտնում մի ճշմարիտ բանաստեղծ», իսկ ապա ավելացնում է, թե երիտասարդ գրողի գրական հայտնությունն իր համար «սոսկ մի նոր բանաստեղծի հայտնությունն չէ, այլև՝ մխիթարություն»:

Արտակ Համբարձումյանը ծնվել է 1969 թ. հունիսի 17-ին Արարատի շրջանի Շահումյան գյուղում: Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում: Բանասերների ընտանիքում մեծացած բժիշկը մի առանձին սեր է ցուցաբերել արվեստի տարբեր տեսակների, իսկ մասնավորապես՝ գրականության նկատմամբ:

Հավերժ երիտասարդ գրողների շարքը համալրած Արտակ Համբարձումյանը 1999-ին արժանացել է Պարույր Սևակի անվան մրցանակին: Այս մրցանակը Պ. Սևակի անվան միակ հիշատակությունը չէ գրողի կենսագրության մեջ: Պատահականությամբ, թե՞ նախախնամությամբ համընկնում են նաև

հունիսի 17-ն ու ավտովթարի զոհ դառնալը: Բանաստեղծը զոհվել է 2001 թվականի փետրվարի 12-ին:

Տարբեր առիթներով անդրադարձ է կատարվել Ա. Համբարձումյանի քնարերգությանը, բարձր է գնահատվել, և այդ գնահատանքը, թերևս, առաջին հերթին կապված էր գրողի այն բացառիկ անկեղծության հետ, որով գրական ասպարեզ մտավ նա: Ստեղծագործեց՝ հավատարիմ մնալով ինքն իրեն, իր բանաստեղծական ես-ին, իր էությանն ու խառնվածքին: Դա բանաստեղծի գրական դավանանքն էր նաև, գրողի առաքելության մասին նրա պատկերացումները, որոնք հաճախ են արժարժվել նրա բանաստեղծություններում: Բանաստեղծին հուզել է առաջին հերթին իր՝ որպես բանաստեղծի տեսակի ու էության հարցը: Բարու որոնումներով է նա սկսել ստեղծագործական իր ուղին. «Երագների գրկում պիտի գտնեմ բարին,- գրում է նա,- բարուն պիտի փարվեմ այսուհետև...»: Նրա ստեղծագործությունն անվերջ ձգվում է ինքնաճանաչման ուղիով, և այդ ուղին մաքրագործվում է տառապանքով, որն անվերապահորեն է ընդունում բանաստեղծը: Այդ են վկայում դեռևս 1992-ին գրված հետևյալ տողերը, որոնք հետագայում բացեցին «Katatonia» շարքը.

Ո՞վ է տառապելուց եղել այսքան շռայլ,

Այսքան ժլատ եղել բողոքելուց (էջ 113):

Այս տառապանքը, սակայն, երբեք չի եղել նեղ անձնական ապրումներից միայն: Ա. Համբարձումյան բանաստեղծը 20-րդ դարի դասականների նման՝ Վ. Տերյան, Եղ. Չարենց, Պ. Սևակ, հստակ գիտակցել է բանաստեղծի իր առաքելությունը և թունամյանական «լույս տալով սպառվելու» պատրաստակամությամբ էլ գրառել.

Ես ապրել եմ բաժան իմ ցավերից դաժան,

Ես ապրել եմ մարդկանց ցավերի հետ...(էջ 49):

Հար և նման մտորումների մեծությունը են գրողի բազմաթիվ ինքնաբերական գրումները, որոնք ամբողջացնում են նրա բանաստեղծական ինքնանկարողմանկարը.

Բանաստեղծի հոգին միշտ էլ փակ է մնում,

Նրան ծերացնում է հարազատ մայրն անգամ,

Նա մեռնում է, ինչպես շախմատում է լինում.

Թագուհուն են խոցում, բայց զոհվում է արքան... (էջ 113):

Ա. Համբարձումյանը գրական ասպարեզ է մտել որպես սիրերգակ՝ սիրային առաջին բանաստեղծությունները համախմբելով 1996-ին հրատարակած «...Ու արտասվել մազերիդ մեջ» ժողովածուի «Եթե մոռանում եմ» և

«Տխուր պարահանդես» շարքերում, որոնցում արդեն հստակորեն ուրվագծվում է շարքերի քնարական հերոսի կերպարը՝ մարդկային առաքինության հավաստումով ու բարձր գիտակցումով: Նրա սիրո երգը հնչում է անկեղծ՝ հենց դրանով էլ դառնալով հուզիչ ու վարակիչ:

Գրականագետ Դ. Գասպարյանը Ա. Զամբարծումյանի հետմահու լույս տեսած «Սպասիր ինձ, Տեր...» ժողովածուի կապակցությամբ «Շռայլ՝ կյանքը վստահելու չափ» արտահայտությամբ է բնութագրում գրողին ու նշում. «Արտակ Զամբարծումյանն իր կյանքն է պատմում. չի հորինում, չի կեղծում, չի խաղում, ձև չի ընդունում, հետաքրքիր ու գրավիչ լինելու մոլուցք չունի: Նա պարզապես իր ապրած կյանքը դարձնում է հոգու երգ»: Սա է Ա. Զամբարծումյանի բանաստեղծական խառնվածքն ու էությունը: Արվեստագետի մուրր ճաշակով նա ասես ոչ թե նկարագրում, այլ բառերով նկարում է պոետի իր երազանքը (թերևս ինչ-որ չափով դրան նպաստել է նկարչի այն ձիրքը, որով օժտված է եղել նա):

Ա. Զամբարծումյանը գրել է մոր բանավետտով, մոր ժամանակների շունչ ու ոգով բանաստեղծություններ, սակայն 20-րդ դարի դասական պոեզիայից սնվող մի երակ կա այդ մոր երգերում, որը գրողին հավատարիմ է պահում դասական քնարերգությանը: Պատահական չէ, որ նրա ժողովածուներում մեծ թիվ են կազմում դասական հանգավորմամբ, մույնիսկ բառամթերքով ու պատկերավորմամբ դասական ավանդներին հավատարիմ բանաստեղծությունները:

Ու արտասվել, ու արտասվել մազերիդ մեջ,
Մարգարիտներ լցնել այտիդ փոսիկներին,
Ուղղել եկար զգեստներիդ փեշերը պերճ
Եվ վայելել սոսափյունը սոսիների:
Նկարել քեզ, քո հայացքի կաթիլն ամեն՝
Լուսավորված մեռելային մոմի լույսով,
Ջրվեժներից կապույտ վարդի թերթեր հանել՝
Նվիրելու... Նվիրվելու երկչոտ հույսով...(էջ 15):

Կամ՝

Քեզ նվիրեմ ամենաթանկն այս կյանքում,
Նվիրեմ այն, ինչ որ չկա ու չունեմ,
Դու պտտվես, լողաս քո խենթ հմայքում,
Իսկ ես անվերջ քո ուները նկարեմ...(էջ 34):

Նրա քնարական հերոսը առաքինին, բարոյականն ու լույսի մաքրությունը որոնող անհատն է, որն իր իղծերի մասին, սակայն, պատմում է ինչ-որ բան տանուլ տվածի կամ անկատար թողած երազանքի փսոսանքով. պատահական չէ ըղձական անցյալ ժամանակաձևի գերակայությունը նրա խոսքում.

Ու լինեիր, ու լինեիր

Իմ ուզածի նման, լույս...

Ու լինեիր առաքինի, բարոյասուրբ,

Ինձ խռովքիս դահճի առաջ չմատնեիր,

Ես փորձեի մեղմիկ շոյել ծնկներդ նուրբ,

Բայց զգեստիդ փեշերն անծայր չգտնեի...(էջ 21)

Բովանդակային առումով այս տողերը կարելի է լրացնել բանաստեղծությունների մի ամբողջ շարքով, որոնք գրողի հոգու կենսագրությունն են՝ բխած սրտի խորքից, հյուսված բանաստեղծի իրական ապրումներից, հոգու ելևէջումներից, սիրուց, կարոտից ու սպասումներից.

Թող աշնան մի օր՝ ուշ երեկոյան,

Օրվա հոգսերից թեթև դալկացած՝

Սպասեիր ինձ ու ես չգայի,

Ու թարթիչներդ խոնարհվեին ցած...(էջ 15)

Սիրային բանաստեղծություններում գերակա տրամադրությունը տըրտմությունն է, որն առաջ է գալիս երազի, սիրո ու ցավի հանդիպողումից, որից էլ ծնունդ է առնում պոետի անծայր տառապանքը՝ որպես մերժման արձագանք: Բանաստեղծը դառնանում է հոգու ցավից, ցավ, որ նույնիսկ մի պահ խարխլում է իր հավատի բուրգի հիմքերը և փլուզում երազանքների տաճարը, և բանաստեղծը հուսահատ բացականչում է. «Արդեն չեմ հավատում ոչ մի առասպելի...»: Սակայն չի կորցնում սերն ու բարությունը և հաջորդ պահին հպարտությամբ խոստովանում է. «Այսօր նորից ստուկները դառնացրին իմ հոգին: Բայց ես չատեցի Մարդուն, ես ատեցի Աբու-Լալա Մահարուն, որ հեռացավ իր քարավանով, որ չդիմացավ...»(էջ 536): Սիրային բանաստեղծություններից շատերը վերարտադրված են որպես վերհուշ՝ հյուսված կարոտի ու թախծի տրամադրություններով, որտեղ բանաստեղծական երգերի հերոսուհին բնութագրվում է հետևյալ մակդիրային կապակցություններով՝ չարչարված կապույտ, երկնագույն հեղեղ, երգի թախիծ, ծյունն անտառների կիսամութ, երգերի հագին փռված հարսնաքող... Անսպասելի, թարմ ու միևնույն ժամանակ ճաշակով ու դիպուկ ընտրված պատկերավորման ու արտահայտչական միջոցները բանաստեղծական պատկերները հասցնում են զգայական ընկալումների աստիճանի.

Քո հայացքից կաթկթում է մի խոր հմայք
Ու ստիպում երակներին փոխել հունը,
Ու ստիպում, որ ջուր դառնան աչքիս կանայք,
Որ տուն տանի, բայց մոտ չգա ինձ իմ քունը (էջ 30):

Հայտնի է, որ պոեզիան գերզգայուն է կյանքի ողբերգական կողմերի հանդեպ: Այդ է պատճառը, որ Ա. Համբարձումյանի ստեղծագործության մեջ առավել խորությամբ է երևում կյանքի դրամատիզմը: Ա. Համբարձումյանի գրական մուտքը զուգահեյլաց հայոց ճակատագրի հերթական սուր ու դրամատիկական ժամանակահատվածին: Հենց այդ օրերի դրամատիզմն է նկատի ունեցել Վ. Դավթյանը՝ գրելով. «Արտակ Համբարձումյանի բանաստեղծություններում դժվար է որոնել ու գտնել մեր կյանքի դրամատիկ, ավելին՝ ողբերգական օրերի արտաքին նշանները, բայց նրանց մեջ ապրող դրամատիզմը զալիս է հուշելու, որ այդ բանաստեղծությունները հենց մեր օրերի ծնունդ են, մարդկային հոգու խախտված ներդաշնակության, ծվատվող կասկածանքների, հուսախաբությունների, անպատասխան հարցերի ծնունդ» :

Ա. Համբարձումյանի քնարերգությունը չէր կարող չարձագանքել ժամանակի քառսին: Սակայն այդ արձագանքը մերկապարանոց չի հնչում, և դրա կարիքը չկա էլ: Դժվար չէ կռահելը, թե ինչու պիտի երիտասարդ բանաստեղծն իրեն մեղավոր զգար հենց 1993 թ. զարման առաջ և գրեր. «Ես երբեք այսպես չեմ դիմավորել զարուհը: Այս տարի այն մի տեսակ քաշվելով է մոտենում, վախվորած է, վիրավորված: Եվ դրա համար ես եմ մեղավոր: Կարծես ես եմ կտրել այն անքանակ ծառերը, որոնցով պիտի իմանայինք զարման մուտքը, այլ ոչ թե ամիս-ամսաթվերով» (էջ 533): Դժվար չէ կռահել նաև, թե կյանքի որ իրավիճակներից են ծնունդ առնում հուսախաբության, հավատի խորտակման ու կորստի այսօրինակ տրամադրությունները.

Քեզ խաբել են, լույսս,
Քեզ անխիղճ մոլորել են,
Մոմի պես ոլորել են,
Կտրել են քո միակ հույսը:
Ինձ ժայռի վրա պահել,
Քեզ ժայռից գլորել են,
Խեղդել են քո հոգին ջահել,
Քեզ անխիղճ մոլորել են... (էջ 21)

Ա. Համբարձումյանի պոեզիայում, սիրո գաղափարին զուգահեռ, ծայր է առնում ու ձգվում նաև մահվան մոտիվը: Իրարամերձ ու ներհակ այս

երևութները զարմանալիորեն ներհյուսվել են նրա բանաստեղծություններում: Բանաստեղծը, սակայն, այս մոտիվները զարգացնում է ոչ թե հակադրման, այլ զուգահեռման ու համադրման սկզբունքով՝ երկուսն էլ հնչեցնելով որպես ոչ մի պայմանականություն չճանաչող անհրաժեշտություններ, կյանքի երկու անհերքելի ճշմարտություններ: Իր բազմաթիվ ինքնաբերականություններից մեկում նա այսպիսի ձևակերպում է տալիս. «Այստեղ մահանում են միայն նրանք, ովքեր մահանում են... մահից // Ես սիրուց եմ մեռնում Աստծո հոժարության ստորոտում...» (էջ 59): Այնքան հետևողականորեն է զարգացնում մահվան մոտիվը նրա քնարերգության մեջ ու այնքան հարազատորեն ձուլվում գրողի հոգու կենսագրությանը, որ կարծես գրողն ինքն էլ է տարակուսում դրանից.

Տեր իմ Աստված, ինչո՞ւ է ինձ միշտ թվացել,

Թե երկնքում ես իմ հոգին եմ մոռացել...

Գրականագետ Դ. Գասպարյանը, անդրադառնալով Ա. Համբարձումյանի քնարերգության առանցքային մոտիվներին, նշում է. «Մահվան գաղափարը տողից տող դարձել է նրա պոեզիայի առանցքային մոտիվը, ավելի ստույգ՝ առանցքային մոտիվի մի ծայրին մահվան գաղափարն է, որն անգամ դառնում է մահվան մուսա, մյուսին՝ կյանքի սերը և սիրո կյանքը...»: Ինչ խոսք, մահվան գաղափարը նույնպես մուտք էր գործել երիտասարդ գրողի բանաստեղծական աշխարհի ու սնունդ էր առնում 90-ականների դժվարին ու դժնդակ օրերից:

Ինչևէ, կյանքի սերն ու սիրո կյանքը Ա. Համբարձումյանի անունն իր ապրած դարից հանձնեցին իր չապրած դարի կամ ինչպես ինքն է ասում՝ «հարևան դարի ծիածաններին», իսկ մահվան երգը նրա համար դարձավ ճակատագիր, որին ընդառաջ գնալով՝ բանաստեղծը մի օր գրել էր. «Շուտ եմ մեռնում, որ ծնվելու պահ որոնեմ» (էջ 69), իսկ մարգարեացման մի պահի էլ՝ ասել. «Ես մեծ բան եմ տվել աշխարհին, բայց իմ չտվածն ավելի մեծ է լինելու» (էջ 542):

Բանալի բառեր - Արտակ Համբարձումյան, բանաստեղծ, ժողովածու

ЛИРИКА АРТАКА АМБАРЦУМЯНА

Ц. Ж. АСАТРЯН

Кандидат филологических наук

Артак Амбарцумян был одним из тех уникальных поэтов, которые создают свой поэтический мир на основании вкладов Армянской классической поэзии и инновационных направлений 20-го века. Он вступил в литературный круг как певец любви. Вход поэта в литературную арену совпадает с очередным резким и драматическим периодом армянской судьбы. Именно поэтому даже стихи о любви Артака Амбарцумяна глубоко выражают жизненную драму. Наряду с идеей любви в поэзии Артака Амбарцумяна появляется и мотив смерти. Эти противоречивые явления удивительным образом переплетаются в его поэзии. Поэт, однако, развивает эти мотивы не по принципу противопоставления, а по принципу сравнения.

THE LYRIC OF ARTAK HAMBARDZUMYAN

TS. ZH. ASATRYAN

Candidate of Philology

Artak Hambardzumyan was one of those unique poets who naturally build their poetic world on the contributions of the Armenian classical poetry and innovative directions of 20th century. He appeared in the literary arena as a poet of love. Poet's literary entry coincides with though and dramatic period of the Armenian fate. That is why even love poems of Artak Hambardzumyan express whole depth of life drama. In parallel with the idea of love death motive appears and stretches in Artak Hambardzumyan's poetry. These contradictory and adverse phenomena surprisingly exist in his poetry. However, the poet develops these motives not according to the principle of contradiction but according to the principle of comparison.